

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշուտ Ղահրամանյանին
Արմավիրի քաղաքացիական երիտասարդական
կենտրոնի համակարգող Մուսաննա Մատինյանից
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր
Հանրապետության փ., 29/52, (Յունի Բանկի 2 հարկ)
E-mail - armavircenter.cyc@gmail.com
Հեռ. +374 98 55 44 06

19 սեպտեմբերի, 2017թ.

Տեղեկության հարցում

Հարգելի պարոն Ղահրամանյան,

ՀՀ Կրթության մասին օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, մարզպետը համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում. հաշվի առնելով օրենքի այս կետը խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

2016, 2017թթ-ին իրականացված աշխատանքների ընթացքում արդյո՞ք Արմավիրի մարզում եղել են կրթությունից դուրս մնացած եւ բացահայտված երեխաների դեպքեր:

Եթե այո, ապա խնդրում եմ նշել, թե

1. Ո՞ր թվականին:
2. Ո՞ր համայնքում կամ համայնքներում:
3. Քա՞նի երեխա:
4. Նրանց տարիքային խումբը:
5. Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել հանրակրթական դպրոցներում նրանց ներառումն ապահովելու համար եւ արդյո՞ք սահմանվում է հետեւողականություն լիարժեք հիմնական կրթության մեջ ընդգրկվածությունը ապահովելու համար:

Տեղեկություն հարցնող՝

Ս. Մատինյան

